Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհուրդ

2001թ. տարեկան հաշվետվություն

ԽՈՐՀՐԴԻ 1-ԻՆ ՆԻՍՏ
ՀՀ վարչապետի հանձնարարությամբ Տեղեկատավական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի անդրանիկ նիստը տեղի է ունեցել 2001թ. հուլիսի 27-ին:
Առեւտրի եւ արդյունաբերության խորհրդի անդամներին է ուղարկվել Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի կանոնադրության նախագիծը, խորհրդում ընդգրկված անդամների ցանկը, »»Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին« ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին« եւ »ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին« ՀՀ օրենքների նախագծերը:

Անդրանիկ նիստի արդյունքում խորհուրդը որոշեց՝
1. Մինչեւ 2001թ. օգոստոսի 1-ը ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի կանոնադրությունը:

2. Ստեղծել աշխատանքային խմբեր՝ »Կովկասյան Ինֆորմացիոն տեխնոլոգիաների նախաձեռնություն« կոնֆերանսի կազմակերպման աշխատանքներին մասնակցելու, հայ-հնդկական միջկառավարական հանձնաժողովի եւ պետական տեղեկատվական ամբողջական համակարգի ստեղծման հարցերով:

3. Նախապատրաստել պրոբլեմների բանկի նախագիծը:

ԽՈՐՀՐԴԻ 2-ՐԴ ՆԻՍՏ
Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի 2-րդ նիստը կայացել է 2001թ. օգոստոսի 10-ին, օրակարգում ընդգրկված են եղել հետեւյալ հարցերը՝

1.Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի աշխատանքային խմբերի ձեւավորում,

2. ՏՏ ոլորտի հիմնախնդիրների տվյալների բանկի ստեղծում,

3. ՀՀ սահմանի վրա համակարգչային բաղադրամասերի ԱԱՀ-ով հարկման խնդիրների մասին,

4.Հեռահաղորդակցության ոլորտի խնդիրներ,

5. ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների ներկա իրավիճակի »Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության« կողմից կատարված հետազոտությունների արդյունքների մասին,

6. ՏՏ արդյունաբերության զարգացման ուղղությունները եւ բյուջետային ֆինանսավորումը:

Արդյունաբերության եւ առեւտրի նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման վարչությունը նախապատրաստել եւ խորհրդի անդամներին, այդ թվում ռոտացիոն կարգով ընդգրկված գործարարներին /34 մասնավոր ընկերություններ եւ կազմակերպություններ/ է ներկայացրել խորհրդի N 2 նիստի արձանագրությունը որով հանձնարարվել է.

ա)»Կովկասյան ինֆորմացիոն տեխնոլոգիաների նախաձեռնություն« տարածաշրջանային կոնֆերանսի հարցերով, հայ-հնդկական միջկառավարական եւ պետական տեղեկատվական միասնական համակարգ ստեղծելու հարցերով ժամանակավոր հանձնաժողովների եւ պետական միջգերատեսչական հանձնաժողովների համագործակցության ապահովում

բ) իրավակարգավորման եւ հեռահաղորդակցության հանձնաժողովներում ընդգրկել »ԱրմենՏել« ՀՁ ՓԲԸ-ի ներկայացուցիչներին

ԽՈՐՀՐԴԻ 3-ՐԴ ՆԻՍՏ

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի 3-րդ նիստը գումարվել է 2001թ. սեպտեմբերի 12-ին հետեւյալ օրակարգով՝

1.Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի անդամների կողմից բարձրացված հիմնախնդիրների տվյալների բանկի մասին,

2. ՀՀ-ում ՏՏ արդյունաբերության զարգացման հայեցակարգից բխող միջոցառումների եւ խնդիրների ժամանակացույցի քննարկում,

3. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի աշխատանքային խմբերի մասին (կանոնակարգ եւ ծրագիր):

Խորհրդի նիստի 3-րդ արձանագրությամբ մի շարք հանձնարարականներ տրվեցին ՀՀ կառավարությանը՝

1. ՀՀ-ում տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունաբերության զարգացման հայեցակարգից բխող միջոցառումների ժամանակացույցի նախագծում,

2. Վերանայել եւ համապատասխան ուղղումներ պատրաստել Մաքսային նոր Օրենսգրքով նախատեսված ժամանակավոր ներմուծման կարգի մեջ մտցնելու համար,

3. Տեղեկացնել խորհրդին՝ հեռահաղորդակցության ոլորտի վերաբերյալ առաջարկություններին, կատարված գործող ծառայությունների սակագների մասին, հանձնաժողովներում քննարկելու եւ առաջարկություններ տալու համար:

ԽՈՐՀՐԴԻ 4-ՐԴ ՆԻՍՏ

Խորհրդի 4-րդ նիստը տեղի է ունեցել 2001թ. հոկտեմբերի 9-ին, հետեւյալ օրակարգով՝

1.Տեղեկատվական տեխնոլոգիաների զանգվածային ներդրման խնդիրներ.
ա) հայկական ստանդարտների եւ համակարգերի մշակման եւ ներդրման մասին,
բ) հանրակրթական դպրոցներում համակարգչային դասարանների, դասընթացների եւ դասագրքերի խնդիրների մասին,
գ)էլեկտրոնային դասագրքերի ներդրման անհրաժեշտության մասին,
դ) գործողությունների հայերեն համակարգերի մշակման անհրաժեշտության մասին (կարծիքների փոխանակում),

2.»Էլեկտրոնային զարգացումը Հարավային Կովկասի համար« միջազգային կոնֆերանսի նախապատրաստական աշխատանքների մասին,

3.աշխատանքային խմբերի ղեկավարների զեկուցումներ՝ աշխատանքների ընթացքի մասին:

Արդյունքում՝

1. ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությանը՝ խորհրդի քարտուղարությանը ներկայացնել ՀՀ հեռահաղորդակցության ոլորտում գործող ծառայությունների եւ դրանց համապատասխան սակագների մասին տեղեկանքը (որը տարածվել է աշխատանքային խմբերի անդամների միջեւ),

2. Խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանին՝ ստեղծել աշխատանքային խումբ, որը կուսումնասիրի Հայաստանում առավել գործածական օպերացիոն համակարգերի հայալեզու թարգմանության ծրագրերի մշակման եւ ներդրման անհրաժեշտությունը,

3. ՀՀ կրթության եւ գիտության նախարարությանը՝ 10-օրյա ժամկետում ներկա-յացնել համապատասխան տեղեկատվություն հանրակրթական դպրոցներում առկա համակարգչային ուսուցման դասարանների տեխնիկական հագեցվածության, դրանց տեղաբաշխման եւ ձեռքբերման ֆինանսական աղբյուրների մասին:

4. ՀՀ ստանդարտացման, սերտիֆիկացման եւ չափագիտության վարչությանը՝ մինչեւ ս.թ. հոկտեմբերի 12-ը շահագրգիռ կողմերի մասնակցությամբ կազմակերպել քննարկումներ ոլորտին վերաբերվող հայկական ստանդարտների եւ համակարգերի մշակման, դրանց ներդրման մեխանիզմների մասին եւ հոկտեմբերի 16-ին ՀՀ վարչապետին ներկայացնել առաջարկություններ:

ԽՈՐՀՐԴԻ 5-րդ ՆԻՍՏ

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի 3-րդ նիստը գումարվել է 2001թ. նոյեմբերի 13-ին, հետեւյալ օրակարգով՝

1. »Էլեկտրոնային զարգացումը եւ Հայաստանը« թեմայով զեկույց,

2. Հայաստանում Տեղեկատվական Տեխնոլոգիաների ոլորտում ստեղծված առաջին տեխնոպարկի գործունեության մասին,

3. ՀՀ պետական տեղեկատվական միասնական համակարգի ստեղծման եւ ներդրման ծրագրի քննարկում,

4.Աշխատանքային խմբերի ղեկավարների զեկուցումներ՝ աշխատանքների ընթացքի մասին:

Արդյունքում՝

1. ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությանը՝

ա) ՀՀ Վարչապետին ս.թ. նոյեմբերի 19-ին ներկայացնել ՀՀ հեռահաղորդակ-ցության ոլորտի գործունեությունը կարգավորող անհրաժեշտ ծառայությունների ցանկը,

բ) »Արմենտել« ՀՁ-ի հետ բանակցությունների շրջանակներում ներառել վերոհիշյալ ծառայությունների ցանկի եւ համապատասխան սակագների որոշման հարցերը:

2. Խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանին՝

ա) գիտակրթական հարցերով աշխատանքային խմբին՝ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության հետ համատեղ քննարկել էլեկտրոնային դասագրքերի ներդրման հարցը,

բ) ս.թ. նոյեմբերի 19-ին ներկայացնել առաջարկություններ Հայաստանում առավել գործածական օպերացիոն համակարգերի հայալեզու տարբերակների անհրաժեշտության վերաբերյալ:

ԽՈՐՀՐԴԻ 6-րդ ՆԻՍՏ

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի 6-րդ նիստը գումարվեց 2001թ. դեկտեմբերի 25-ին: Օրակարգում ներառված էին հետեւյալ կետերը՝

1. 2001թ. նոյեմբերի 13-ի նիստի արձանագրությամբ տրված հանձնարարականների կատարման ընթացքի մասին,

2.»Ձեռնարկությունների ինկուբատոր« Հիմնադրամի ստեղծման մասին,

3. տեղեկատվական համակարգերի կառուցման նկատմամբ պահանջների, տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում օգտագործվող տերմինների քննարկման անհրաժեշտության եւ քննարկումների մեխանիզմի ստեղծման վերաբերյալ,

4. »Հեղինակային իրավունքների եւ հարակից իրավունքների մասին« ՀՀ օրենքի խախտումների վերաբերյալ,

5. աշխատանքային խմբերի ղեկավարների զեկուցումներ՝ աշխատանքների ընթացքի մասին:

Որպես խորհրդի 7-րդ նիստի արձանագրության կատարում խորհրդի համապատասխան աշխատանքային խմբում քննարկվեց ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության խորհրդի քարտուղարությանը ներկայացրած ՀՀ հեռահաղորդակ-ցության ոլորտում գործող ծառայությունների եւ դրանց համապատասխան սակագների մասին տեղեկանքը:

Արդյունքում՝

1. Քարտուղարությանը հանձնարարվեց խորհրդի անդամներին տրամադրել ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության ներկայացրած Հայաստանի Հանրապետության հեռահաղորդակցության ոլորտի գործունեությունը կարգավորող անհրաժեշտ ծառայությունների եւ սակագների մասին տեղեկանքը՝ հաջորդ նիստում քննարկելու համար:

2. Հայ-հնդկական միջկառավարական հանձնաժողովի հարցերով աշխատանքային խմբում քննարկել Հայաստանում եւ Հնդկաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների ցուցահանդեսներ կազմակերպելու հնդկական կողմի առաջարկությունը եւ ձեռքբերված պայմանավորվածությունների մասին զեկուցել հաջորդ նիստում:

3. ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի նախարարությանը՝ աջակցել »Ավիահնֆոտել« ՓԲԸ-ի կողմից կազմակերպված Տեղեկատվական համակարգերի կառուցման նկատմամբ պահանջների, տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում օգտագործվող հայերեն տերմինների քննարկմանը (www.menq.am) ԻՏ ոլորտի շահագրգիռ կազմակերպությունների հետ եւ քննարկման արդյունքները ներկայացնել Լեզվի պետական տեսչության տերմինաբանական հանձնաժողովին՝ անհրաժեշտության դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացք տալու համար:

4. ՀՀ կրթության եւ գիտության նախարարությանը՝ պետական, դոնոր կազմակերպությունների եւ անհատ ձեռներեցների կողմից տրամադրված միջոցները նպատակաուղղել հանրակրթական դպրոցներում համակարգչային տեխնիկայի տարածաշրջանային հավասարաչափ բաշխմանը եւ պարբերաբար խորհրդի նիստերին ներկայացնել տեղեկատվություն այդ գործընթացների զարգացման վերաբերյալ:

5. Լեզվի պետական տեսչությանը՝ ՀՀ վարչապետի 2001թ. նոյեմբերի 22-ի N822 որոշմամբ հաստատված »Հ-ում 2001-2004թթ. ընթացքում համապատասխան բնագավառների տեխնիկական կանոնակարգերի մշակման ժամանակացույցի բաժինների եւ նոր կետերի ցանկի« 2932 կետով նախապատրաստվող ՀՀ կառավարության »Տեղեկատվական տեխնոլոգիաներում հայերեն գրանշանների կիրառմանը ներկայացվող պահանջները« տեխնիկական կանոնակարգի հետ կապված որոշման նախագիծը մինչեւ ՀՀ կառավարություն ներկայացնելը տրամադրել խորհրդին՝ անդամներին բաժանելու եւ 2002թ. հունվարին կայանալիք նիստին քննարկելու համար: Ապահովել խնդրի քննարկումներին սփյուռքահայ շահագրգիռ մասնագետների մասնակցությունը:

2002թ. տարեկան հաշվետվություն

ԽՈՐՀՐԴԻ 7-րդ ՆԻՍՏ

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի 7-րդ նիստը, որը կազմակերպվել էր խորհրդի քարտուղարության կողմից /ՁՀԳ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հարցերով քարտուղարություն/ գումարվեց 2002թ. փետրվարի 27: Նիստի օրակարգում ընդգրկված էին հետեւյալ կետերը՝

1. ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության ներկայացրած Հայաստանի Հանրապետության հեռահաղորդակցության ոլորտի գործունեությունը կարգավորող անհրաժեշտ ծառայությունների եւ սակագների մասին տեղեկանքի քննարկման վերաբերյալ,

2.»Էլեկտրոնային Կովկաս« տարածաշրջանային կոնֆերանսի կազմակերպման խնդիրների մասին:

Նիստի ընթացքում լսվեցին հեռահաղորդակցության հարցերով աշխատանքային խմբի ղեկավար՝ Մ.Մարկոսյանի ելույթը, որում ներկայացված էին կապի եւ հեռահաղորդակցության ոլորտի մի շարք հիմնախնդիրներ եւ դրանց լուծման որոշ առաջարկություններ:

Խորհրդի 7-րդ նիստում ներկայացվեցին նաեւ »Էլեկտրոնային Կովկաս« տարածաշրջանային կոնֆերանսի կազմակերպման հետ կապված նախապատրաստական աշխատանքները:

Կազմակերպվեց խորհրդի արտահերթ նիստ »Էլեկտրոնային Կովկաս« տարածաշրջանային կոնֆերանսի հարցերով շահագրգիռ եւ կազմակերպիչ կողմերի մասնակցությամբ, որին մասնակցեց նաեւ ՀՀ Արտաքին գործերի նախարարի տեղակալը: Մասնակիցներին ներկայացվեցին կատարված աշխատանքները՝ կապված համաժողովի կազմակերպման հետ, նախնական ծրագիրը, ինչպես նաեւ համաժողովի մասնակից երկրներից հրավիրվածների ցուցակը:

ԽՈՐՀՐԴԻ 8-րդ ՆԻՍՏ

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի 8-րդ նիստը գումարվեց 2002թ. ապրիլի 6-ին: Խորհրդի հերթական նիստի օրակարգում ընդգրկված էին՝

1. հեռահաղորդակցության բնագավառի խնդիրների կարգավորման առաջարկությունները,

2. »Պետական տեղեկատվական միասնական համակարգի« ստեղծման ծրագրի մասին,

3. »Տեղեկատվական տեխնոլոգիաներում հայերեն գրանշանների կիրառմանը ներկայացվող պահանջների« մասին,

4. »Քվանտ« վարժարանի կողմից ներկայացվող առաջարկի մասին,

5. Ռոտացիոն կազմի հաստատման մասին:

Նիստի ընթացքում ներկայացվեց »Քվանտ« վարժարանի կողմից առաջարկվող »Արագած« ուսումնական ծրագիրը եւ նրա իրագործման հետ կապված որոշ հիմնախնդիրներ:

Մասնակիցներին էին ներկայացվել »Պետական տեղեկատվական միասնական համակարգի« ստեղծման ծրագիրը եւ դրա վերաբերյալ կարծիքներ:

Ինչպես նաեւ »Լեզվի պետական տեսչության« կողմից ներկայացված համապատասխան փաստաթղթերը /»Հայերեն գրանշանների մասին« օրենքը/: Հարցի լուծումը որոշվեց հետաձգել մինչեւ 2002 թվականի սեպտեմբեր ամիսը:

ՀՀ Կապի եւ հեռահաղորդակցության նախարարի տեղակալը խորհրդի անդամներին

ներկայացրեց հեռահաղորդակցության ոլորտի նոր սակագները, որոնք ուժի մեջ կմտնեն 2002թվականի մայիսի 1-ից:

Արդյունքում՝

1. ՀՀ Տրանսպորտի եւ կապի նախարարությանը, ՀՀ Առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարությանը, ՀՀ Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությանը եւ ՀՀ Արդարադատության նախարարությանը՝ մեկ շաբաթյա ժամկետում ՀՀ Կառավարություն ներկայացնել կարծիք՝ խորհրդի հեռահաղորդակցության հարցերով աշխատանքային խմբի ղեկավար Մ. Մարկոսյանի՝ »Լիցենզիայի մասին« ՀՀ օրենքի հոդված 43-ի »Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկի« 10-րդ կետի (հեռահաղորդակցության բնագավառ), 5-րդ ենթակետը հանելու առաջարկության վերաբերյալ (մասնավորապես արտադրության եւ առեւտրի մասով) ՀՀ Վարչապետի մոտ քննարկելու համար:

2. ՀՀ կապի եւ տրանսպորտի նախարարությանը՝
ա) Ստամբուլի գագաթաժողովի նյութերը տրամադրել խորհրդի անդամներին
բ) խորհրդի անդամներին մասնակից դարձնել »Կապի զարգացման« ծրագրի ստեղծմանը:

3. ՀՀ կառավարության աշխատակազմին՝
ա) միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացված »Պետական տեղեկատվական միասնական համակարգի« ստեղծման ծրագիրը եւ համապատասխան ՀՀ կառավարության որոշման նախագիծը տրամադրել խորհրդի քարտուղարությանը խորհրդի համապատասխան աշխատանքային խմբում քննարկելու եւ կարծիք ներկայացնելու համար:
բ) կարծիքը ստանալուց հետո տրամադրել այն միջգերատեսչական հանձնաժողովին եւ կազմակերպել քննարկում ՀՀ վարչապետի մոտ:
գ) սահմանված կարգով նախապատրաստել եւ ՀՀ վարչապետի հաստատմանը ներկայացնել ՀՀ վարչապետի 2001թ-ի հուլիսի 26-ի »Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին« N 557 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ վարչապետի որոշման նախագիծ՝ համաձայն նիստի ժամանակ հաստատված ցուցակի:

Կրթության եւ գիտության նախարարությանը՝ համապատասխան առաջարկություններ ներկայացնել »Քվանտ« վարժարանի կողմից ներկայացված »Արագած« ծրագիրը կիրառելու համար:

ԽՈՐՀՐԴԻ 9-ՐԴ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՆԻՍՏ

Խորհրդի 9-րդ ընդլայնված նիստը տեղի է ունեցել 2002թ. մայիսի 6-ին: Նիստի օրակարգում ընդգրկված էր մեկ հարց՝
Հայաստանի Հանրապետության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման խոչընդոտները եւ նրանց հաղթահարման ուղիները:

Ընդլայնված նիստում մասնակցում էին սփյուռքահայ գործարարներ, մասնավորապես՝ »Ամերիկայի բարձր տեխնոլոգիաների հայկական խորհուրդի« ներկայացուցիչները:

Արդյունքում քարտուղարությանը հանձնարարվեց նիստի ընթացքում բարձրացված հարցերը ընդգրկել »Պրոբլեմների բանկում« եւ համապատասխան աշխատանքային խմբերում քննարկումից հետո ներկայացնել խորհրդի քննարկմանը:

ԽՈՐՀՐԴԻ 10-ՐԴ ՆԻՍՏ

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի 10-րդ նիստը կայացել է 2002թ. հոկտեմբերի 22-ին, օրակարգում ընդգրկված էին հետեւյալ հարցերը.

1. Խորհրդի անդամների կողմից կատարված առաջարկությունների հիման վրա Հայաստանի »ՏՀՏ գլխավոր ռազմավարության շրջանակներում իրականացվելիք ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ«,
2. Ինտերնետի վիճակի եւ IP հեռախոսակապի մասին,
3. Դոնոր եւ միջազգային կազմակերպությունների աշխատանքային խմբի ստեղծման, կազմի եւ ծրագրի հաստատման հարցը,
4. 13.09.02թ. ՀՀ վարչապետի մոտ կայացած խորհրդակցության N63-130 արձանագրությամբ տրված հանձնարարականների կատարման ընթացքի մասին հաշվետվություն:

Արդյունքում՝

1. Դրական գնահատել ՏՀՏ Գլխավոր ռազմավարության շրջանակներում մեկ տարվա ընթացքում ծրագրերի իրականացման գործունեությունը:
2. ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարար Ա. Մանուկյանին՝
ա) ստանձնել ՏՀՏ Գլխավոր ռազմավարության իրականացման պատասխանատվությունը.
բ) մինչեւ նոյեմբերի 30-ը ՏՏՁԱԽ-ի անդամներին եւ այլ շահագրգիռ մարմինների քննարկմանը ներկայացնել առաջարկություններ ՏՀՏ Գլխավոր ռազմավարության վերաբերյալ եւ ստացված առաջարկությունների արդյունքների հիման վրա ներկայացնել առաջարկություն որոշ դրույթներ 2003 թվականի ՀՀ կառավարության գործունեության ծրագրերի մեջ ներառելու վերաբերյալ:
3. Կարեւորելով ինտերնետ սակագների հաստատման խնդիրը եւ IP հեռախոսային ծառայություններ մատուցմանը խոչընդոտների վերացման անհրաժեշտությունը.
ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարար Ա. Մանուկյանին՝
ա) »ԱրմենՏել« ՀՁ ՓԲԸ-ի կողմից ներկայացվելիք ինտերնետի սակագների տնտեսական հիմնավորումների քննարկման վերջին փուլում ներգրավել խորհրդի անդամներին, որից հետո հարցը քննարկել ՀՀ վարչապետի մոտ, վերջնական որոշում ընդունելու նպատակով.
բ) ՀՀ արդարադատության նախարար Դ. Հարությունյանի հետ համատեղ՝ 10 օրյա ժամկետում ներկայացնել գործնական առաջարկությունների փաթեթ IP հեռախոսակապի ծառայությունների մատուցման տիրող իրավիճակի կարգավորման վերաբերյալ.
գ) 10 օրյա ժամկետում կազմակերպել հանդիպում »ԱրմենՏել« ՀՁ ՓԲԸ-ի ներկայացուցիչների եւ ինտերնետ մատակարարների հետ՝ քննարկելու համար ԱրմենՏելի հետ պայմանագրային հիմունքներով IP հեռախոսակապ մատուցելու հնարավորությունը:
4. Ստեղծել »Դոնոր եւ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության« աշխատանքային խումբ: Աշխատանքային խմբի ղեկավար Գարեգին Չուգասզյանին՝ մինչեւ ՏՏՁԱԽ-ի հաջորդ նիստը ՀՀ վարչապետի քննարկմանը ներկայացնել աշխատաքնային խմբի կազմը եւ գործունեության ծրագիրը:
5. ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարար Ա. Մանուկյանին՝ 10 օրյա ժամկետում սահմանված կարգով ՀՀ կառավարություն ներկայացնել »Լիցենզավորման մասին« ՀՀ օրենքի հոդված 43-ի »Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկի« 10-րդ կետի 5-րդ ենթակետի հետ կապված խնդրի լուծման վերաբերյալ առաջարկություն:
6. ՏՏՁԱԽ-ի քարտուղարությանը՝ քննարկման արդյունքներով լրամշակել խորհրդի նախորդ 9 նիստերի հանձնարարականների կատարման ընթացքի մասին հաշվետվությունը:
7. ՀՀ կառավարության աշխատակազմի լրատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության պետ Մ.Հարությունյանին՝ լրամշակված հաշվետվության մասին հաղորդագրությունը հրապարակել:
8. ՏՏՁԱԽ-ի քարտուղարությանը՝ ՏՏՁԱԽ հերթական նիստը հրավիրել դեկտեմբերի 10-ին:

Համաձայն ՀՀ վարչապետի մոտ կայացած խորհրդակցության
N 63-130 արձանագրության 3 կետի (բ) ենթակետի

Տեղեկանք
նախորդ նիստերում տրված հանձնարարականների կարգավիճակի վերաբերյալ
27.07.2001թ. թիվ 1 արձանագրությամբ տրվել են հետեւյալ հանձնարարականները՝

1. Խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանին՝

ա) մինչեւ ս.թ. օգոստոսի 1-ը ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի կանոնադրության նախագիծը, (Հանձնարարականը կատարված է)

բ) կազմել աշխատանքային խմբեր՝ «Կովկասյան Ինֆորմացիոն տեխնոլոգիաների նախաձեռնություն» կոնֆերանսի կազմակերպման աշխատանքներին մասնակցելու, հայ-հնդկական միջկառավարական հանձնաժողովի եւ պետական տեղեկատվական ամբողջական համակարգի ստեղծման հարցերով, (Հանձնարարականը կատարված է)

գ) ստեղծել պրոբլեմների բանկ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի հաջորդ նիստը անցկացնել ս.թ. օգոստոսի 10-ին: (Հանձնարարականը կատարված է)

10.08.2001թ. թիվ 2 արձանագրությամբ տրվել են հետեւյալ հանձնարարականները՝

1. Հաստատել հանձնաժողովների կազմերը (Հանձնարարականը կատարված է)

2. Խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանին՝
ա) մինչեւ հաջորդ նիստ ստեղծել պրոբլեմների բանկ(Հանձնարարականը կատարված է)
բ) իրավակարգավորման, հեռահաղորդակցության եւ գիտակրթական մշտական հանձնաժողովների գործառույթների սահմանում եւ գործունեության ծրագրի մշակում (Կատարված է բայց ենթակա է վերանայման)
գ) «Կովկասյան ինֆորմացիոն տեխնոլոգիաների նախաձեռնություն տարածաշրջանային կոնֆերանսի» հարցերով, հայ-հնդկական միջկառավարական եւ պետական տեղեկատվական միասնական համակարգ ստեղծելու հարցերով ժամանակավոր հանձնաժողովների եւ պետական միջգերատեսչական հանձնաժողովների համագործակցության ապահովում(Հանձնարարականը կատարված է)
դ) իրավակարգավորման եւ հեռահաղորդակցության հանձնաժողովներում ընդգրկել «ԱրմենՏել» ՀՁ» ՓԲԸ-ի ներկայացուցիչներին(Հանձնարարականը կատարված է)

3. ՀՀ մաքսային վարչությանը՝

ա) ՀՀ մաքսային վարչության պետ Ա. Ավետիսյանին՝ զգուշացնել բոլոր մաքսակետերին 8471 կոդով ներկրվող ապրանքների ԱԱՀ-ով չհարկելու մասին: (Հանձնարարականը կատարված է)

4. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի հաջորդ նիստը անցկացնել ս.թ. սեպտեմբերի 12-ին: (Հանձնարարականը կատարված է)

12.09.2002թ. թիվ 3 արձանագրությամբ տրվել են հետեւյալ հանձնարարականները՝

ՀՀ կառավարությանը ՀՀ-ում տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունաբերության զարգացման հայեցակարգից բխող միջոցառումների ժամանակացույցի նախագծում՝ ՀՀ կապի եւ հեռահաղորդակցության զարգացման հայեցակարգի նախագծի ներկայացման ժամկետը սահմանել 6 ամիս: (Հանձնարարականը կատարված է)

Վերանայել եւ համապատասխան ուղղումներ պատրաստել Մաքսային նոր Օրենսգրքով նախատեսված ժամանակավոր ներմուծման կարգի մեջ մտցնելու համար: (Հանձնարարականը կատարված է)

Խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանին՝

ա) քննարկել Գիտակրթական հարցերով աշխատանքային խմբի (համակարգող՝ ակադեմիկոս Ա. Շուքուրյան) ներկայացրած առաջարկությունները ժամանակացույցում ներառելու հարցը, (Հանձնարարականը կատարված է)
բ) տեղեկացնել խորհրդին՝ հեռահաղորդակցության ոլորտում գործող ծառայությունների սակագների մասին՝ հանձնաժողովներում քննարկելու եւ առաջարկություններ տալու համար, (Հանձնարարականը կատարված է)

գ) հեռահաղորդակցության ոլորտում գործող ծառայությունների սակագներ սահմանելու մասին Վ.Մխիթարյանի առաջարկությունները քննարկել համապատասխան աշխատանքային խմբերում՝ հեղինակի մասնակցությամբ:(Հանձնարարականը կատարված է)

09.10.200թ. թիվ 4 արձանագրության համաձայն տրվել են հետեւյալ հանձնարարականները՝

1. ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությանը՝ 2-օրյա ժամկետում խորհրդի քարտուղարությանը ներկայացնել Հայաստանի Հանրապետության հեռահաղորդակ-ցության ոլորտում գործող ծառայությունների եւ դրանց համապատասխան սակագների մասին տեղեկանք: (Հանձնարարականը կատարված է)

2. Խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանին՝
ա) գիտակրթական հարցերով աշխատանքային խմբում՝ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության հետ համատեղ քննարկել էլեկտրոնային դասագրքերի ներդրման հարցը հանրակրթական դպրոցներում եւ ներկայացնել առաջարկություններ դրա իրականացման հնարավորությունների եւ ժամկետների վերաբերյալ, (Հանձնարարականը կատարված է)
բ) ստեղծել աշխատանքային խումբ եւ ուսումնասիրել Հայաստանում առավել գործածական օպերացիոն համակարգերի հայալեզու թարգմանության ծրագրերի մշակման եւ ներդրման անհրաժեշտությունը, (Հանձնարարականը կատարված է)
գ) քննարկել Հայաստանի Հանրապետությունում ս.թ. նոյեմբերի 12-14-ին կայանալիք «Էլեկտրոնային զարգացումը Հարավային Կովկասի համար միջազգային կոնֆերանսին ցուցահանդեսի» կազմակերպման հետ կապված հար-ցերը եւ ներկայացնել առաջարկություն: (Համաժողովի հետաձգման պատճառով հանձնարարականը հանվել է)

3. ՀՀ կրթության եւ գիտության նախարարությանը՝ 10-օրյա ժամկետում ներկայացնել համապատասխան տեղեկատվություն հանրակրթական դպրոցներում առկա համակարգչային ուսուցման դասարանների տեխնիկական հագեցվածության, դրանց տեղաբաշխման եւ ձեռքբերման ֆինանսական աղբյուրների մասին: (Հանձնարարականը կատարված է)

4. ՀՀ ստանդարտացման, սերտիֆիկացման եւ չափագիտության վարչությանը՝ մինչեւ ս.թ. հոկտեմբերի 12-ը շահագրգիռ կողմերի մասնակցությամբ կազմակերպել քննարկումներ ոլորտին վերաբերվող հայկական ստանդարտների եւ համակարգերի մշակման, դրանց ներդրման մեխանիզմների մասին եւ հոկտեմբերի 16-ին ՀՀ վարչապետին ներկայացնել առաջարկություն: (Հանձնարարականը կատարված է)

13.11.2001թ.խորհրդի նիստի թիվ 5 արձանագրության տրվել են հետեւյալ հանձնարարականները՝

ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությանը՝

ա) ՀՀ Վարչապետին ս.թ. նոյեմբերի 19-ին ներկայացնել Հայաստանի Հանրապետության հեռահաղորդակցության ոլորտի գործունեությունը կարգավորող անհրաժեշտ ծառայությունների ցանկը (Հանձնարարականը կատարված է)
բ) «Արմենտել» ՀՁ»-ի հետ բանակցությունների շրջանակներում ներառել վերոհիշյալ ծառայությունների ցանկի եւ համապատասխան սակագների որոշման հարցերը: (Հանձնարարականը կատարված է)

2. Խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանին՝
ա) գիտակրթական հարցերով աշխատանքային խմբին՝ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության հետ համատեղ քննարկել էլեկտրոնային դասագրքերի ներդրման հարցն, այդ թվում, հանրակրթական դպրոցներում, (Հանձնարարականը կատարված է)
բ) ս.թ. նոյեմբերի 19-ին ներկայացնել առաջարկություններ Հայաստանում առավել գործածական օպերացիոն համակարգերի հայալեզու տարբերակների անհրաժեշտության վերաբերյալ, (Հանձնարարականը կատարված է)
գ) «Կովկասյան ինֆորմացիոն տեխնոլոգիաների նախաձեռնություն» տարածաշրջանային կոնֆերանսի հարցերով աշխատանքային խմբին՝ պարբերաբար տեղեկատվություն

ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում 2002թ. ապրիլի 12-18-ին կայանալիք «Էլեկտրոնային զարգացումը Հարավային Կովկասի համար» միջազգային կոնֆերանսի եւ ցուցահանդեսի կազմակերպչական աշխատանքների վերաբերյալ: (Հանձնարարականը կատարված է)

3. ՀՀ կրթության եւ գիտության նախարարությանը՝ նոյեմբերի 19-ին ներկայացնել ընդգրկուն տեղեկատվություն հանրապետության հանրակրթական դպրոցներում առկա համակարգչային ուսուցման դասարանների տեխնիկական հագեցվածության, դրանց տեղաբաշխման եւ ձեռքբերման ֆինանսական աղբյուրների մասին: (Հանձնարարականը կատարված է)

4. ՀՀ ստանդարտացման, սերտիֆիկացման եւ չափագիտության վարչության պետ

Ա. Մալխասյանին՝ մինչեւ ս.թ. նոյեմբերի 19-ը ՀՀ վարչապետին ներկայացնել առաջարկություններ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի հայկական ստանդարտների եւ համակարգերի մշակման, դրանց ներդրման մեխանիզմների մասին: (Հանձնարարականը կատարված է)

Խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանին՝
ա) Քարտուղարությանը՝ խորհրդի անդամներին տրամադրել ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության ներկայացրած Հայաստանի Հանրապետության հեռահաղորդակցության ոլորտի գործունեությունը կարգավորող անհրաժեշտ ծառայությունների եւ սակագների մասին տեղեկանքը՝ հաջորդ նիստում քննարկելու համար: (Հանձնարարականը կատարված է)
բ) Գիտակրթական հարցերով աշխատանքային խմբին՝ հսկողության տակ պահել հանրակրթական դպրոցներում էլեկտրոնային դասագրքերի ներդրման ընթացքը եւ պարբերաբար զեկուցել ՀՀ վարչապետին: (Հանձնարարականը կատարված է)
գ) Շարունակել քննարկումները շահագրգիռ կողմերի հետ Հայաստանում առավել գործածական օպերացիոն համակարգերի հայալեզու տարբերակների ստեղծման անհրաժեշտության շուրջ եւ հաջորդ նիստին ներկայացնել ընդգրկուն փաստաթուղթ ներառելով գիտակրթական համակարգի ներկայացուցիչների կարծիքները:
(Հանձնարարականը կատարված է)
դ) «Էլեկտրոնային Կովկաս» տարածաշրջանային կոնֆերանսի հարցերով աշխատանքային խմբին՝ աջակցել Զարգացման հայկական գործակալությանը 2002թ.-ի աշնանը Երեւանում Բարձր տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների տարածաշրջանային ցուցահանդեսի նախապատրաստական աշխատանքներում: (Հանձնարարականը կատարված է)
ե) «Էլեկտրոնային Կովկաս» տարածաշրջանային կոնֆերանսի հարցերով աշխատանքային խմբին՝ քննարկել 2002թ. գարնանը Երեւանում կայանալիք տարածաշրջանային կոնֆերանսի շրջանակներում Ամերիկայի Բարձր տեխնոլոգիաների խորհրդի մասնակցության ձեւերը:
(Հանձնարարականը կատարված է)
զ) Հայ-հնդկական միջկառավարական հանձնաժողովի հարցերով աշխատանքային խմբի ղեկավար Մ. Մարկոսյանին՝ քննարկել Հայաստանում եւ Հնդկաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների ցուցահանդեսներ կազմակերպելու հնդկական կողմի առաջարկությունը եւ ձեռքբերված պայմանավորվածությունների մասին զեկուցել հաջորդ նիստում:
(Հանձնարարականը կատարված է)

6. ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի նախարարությանը՝ աջակցել «Ավիահնֆոտել» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված Տեղեկատվական համակարգերի կառուցման նկատմամբ պահանջների, տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում օգտագործվող հայերեն տերմինների քննարկմանը (www.menq.am) ԻՏ ոլորտի շահագրգիռ կազմակերպությունների հետ եւ քննարկման արդյունքները ներկայացնել Լեզվի պետական տեսչության տերմինաբանական հանձնաժողովին՝ անհրաժեշտության դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացք տալու համար: (Հանձնարարականը կատարված է)

7. ՀՀ կրթության եւ գիտության նախարարությանը՝ պետական, դոնոր կազմակերպությունների եւ անհատ ձեռներեցների կողմից տրամադրված միջոցները նպատակաուղղել հանրակրթական դպրոցներում համակարգչային տեխնիկայի տարածաշրջանային հավասարաչափ բաշխմանը եւ պարբերաբար խորհրդի նիստերին ներկայացնել տեղեկատվություն այդ գործընթացների զարգացման վերաբերյալ: (Մասնակիորեն կատարված է)

8. Լեզվի պետական տեսչության պետ Լ. Գալստյանին՝ ՀՀ վարչապետի 2001թ. նոյեմբերի 22-ի N822 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում 2001-2004թթ. ընթացքում համապատասխան բնագավառների տեխնիկական կանոնակարգերի մշակման ժամանակացույցի բաժինների եւ նոր կետերի ցանկի» 2932 կետով նախապատրաստվող ՀՀ կառավարության «Տեղեկատվական տեխնոլոգիաներում հայերեն գրանշանների կիրառմանը ներկայացվող պահանջները» տեխնիկական կանոնակարգի հետ կապված որոշման նախագիծը մինչեւ ՀՀ կառավարություն ներկայացնելը տրամադրել խորհրդին՝ անդամներին բաժանելու եւ 2002թ. հունվարին կայանալիք նիստին քննարկելու համար: Ապահովել խնդրի քննարկումներին սփյուռքահայ շահագրգիռ մասնագետների մասնակցությունը: (Հանձնարարականը կատարված է)

9. ՀՀ հեղինակային իրավունքների ազգային գործակալության պետ Ա. Ազիզյանին՝ քննարկել «Թառումյան» հայերեն տառատեսակների հեղինակ Ռ. Հակոբյանի կողմից խորհրդի նիստում բարձրացրած խնդիրները: (Հանձնարարականը կատարված է)

27.02.2002թ. թիվ 7 արձանագրությամբ տրվել են հետեւյալ հանձնարարականները՝

1. Հեռահաղորդակցության հարցերով աշխատանքային խմբի ղեկավար Մ.Մարկոսյանին՝ ամբողջացնել ներկայացված առաջարկությունները եւ տրամադրել խորհրդի անդամներին հաջորդ նիստում քննարկելու համար:

2. Խորհրդի քարտուղար Ա.Գրիգորյանին՝ կազմակերպել խորհրդի արտահերթ ընդլայնված նիստ՝ քննարկելու համար «Էլեկտրոնային Կովկաս» տարածաշրջանային կոնֆերանսի կազմակերպման հետ կապված խնդիրները:

«Էլեկտրոնային Կովկաս» տարածաշրջանային կոնֆերանսի հարցերով աշխատանքային խմբի ղեկավար՝ Գ.Չուգասզյանին խորհրդի արտահերթ ընդլայնված նիստում ներկայացնել ծրագրային փաստաթուղթ տարածաշրջանային կոնֆերանսը բարձր մակարդակով կազմակերպելու համար:

06.04.2002թ.ՏՏԶԱԽ նիստի թիվ 8 արձանագրությամբ տրվել են հետեւյալ հանձնարարականները՝

1. ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությանը, ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարությանը, ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությանը եւ ՀՀ արդարադատության նախարարությանը՝ մեկ շաբաթյա ժամկետում ՀՀ Կառավարություն ներկայացնել կարծիք՝ խորհրդի հեռահաղորդակցության հարցերով աշխատանքային խմբի ղեկավար Մ. Մարկոսյանի՝ «Լիցենզիայի մասին» ՀՀ օրենքի հոդված 43-ի «Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկի» 10-րդ կետի (հեռահաղորդակցության բնագավառ), 5-րդ ենթակետը հանելու առաջարկության վերաբերյալ (մասնավորապես արտադրության եւ առեւտրի մասով) ՀՀ Վարչապետի մոտ քննարկելու համար: (Ընթացքի մեջ է)

2. ՀՀ կապի եւ տրանսպորտի նախարարությանը՝

ա) Ստամբուլի գագաթաժողովի նյութերը տրամադրել խորհրդի անդամներին (Հանձնարարականը կատարված է)

բ) խորհրդի անդամներին մասնակից դարձնել «Կապի զարգացման» ծրագրի ստեղծմանը: (Ընթացքի մեջ է)

3. ՀՀ կառավարության աշխատակազմին՝

ա) միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացված «Պետական տեղեկատվական միասնական համակարգի» ստեղծման ծրագիրը

եւ համապատասխան ՀՀ կառավարության որոշման նախագիծը տրամադրել խորհրդի քարտուղարությանը խորհրդի համապատասխան աշխատանքային խմբում քննարկելու եւ կարծիք ներկայացնելու համար: (Հանձնարարականը կատարված է)

բ) կարծիքը ստանալուց հետո տրամադրել այն միջգերատեսչական հանձնաժողովին եւ կազմակերպել քննարկում ՀՀ վարչապետի մոտ: (Ընթացքի մեջ է)

գ) սահմանված կարգով նախապատրաստել եւ ՀՀ վարչապետի հաստատմանը ներկայացնել ՀՀ վարչապետի 2001թ-ի հուլիսի 26-ի «Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին» N557 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ վարչապետի որոշման նախագիծ՝ համաձայն նիստի ժամանակ հաստատված ցուցակի: (Հանձնարարականը կատարված է)

Կրթության եւ գիտության նախարարությանը՝ համապատասխան առաջարկություններ ներկայացնել «Քվանտ» վարժարանի կողմից ներկայացված «Արագած» ծրագիրը կիրառելու համար: (Հանձնարարականը կատարված է)

06.05.2002թ. ՏՏԶԱԽ ընդլայնված նիստի թիվ 9 արձանագրությամբ տրվել է հանձնարարական՝

Քարտուղարությանը՝

Նիստի ընթացքում բարձրացված հարցերը ընդգրկել «Պրոբլեմների բանկում» եւ համապատասխան աշխատանքային խմբերում քննարկումից հետո ներկայացնել խորհրդի քննարկմանը: (Հանձնարարականը կատարված է)